

հայրենի բնագաւառում անանապատութիւնը, բազմացնելով իր սեփական հօտերը, նա դրանով իսկ ոչ միայն անտեսապէս պիտի կազդուրուի եւ ուժովնայ, այլ եւ՝ այդ եղանակով Ջաւախքի արօտները նա իր սեփական կարիքներին ի սպաս դրած պիտի լինի, որով եւ աստիճանաբար պիտի սահմանափակուին ու ժամանակին մինչեւ իսկ վերանան բոլոր հնարաւորութիւնները՝ Մեծ Կովկասի լանջերից Ջաւախք եկող կէս-վաչկատուն խաչնարածների առաջ: Երբ այդ ամէնը կը կատարուի, երբ Ջաւախեցին մշակութապէս կ'առաջդիմի, երբ Լենինական-Ախալքալաք երկաթուղին իրականութիւն կը դառնայ եւ ոչ թէ թրղթի վրայ կը մնայ, այդ դէպքում աւելի եւս կը պարզուի, թէ դէպի ո՞ր կողմն է հակումը Ջաւախքը, — դէպի Վրաստան, թէ՞ դէպի Հայաստան:

Մինչ այն, ուրեմն մինչ Ջաւախքի խնդիրը կը ստանայ իր միակ արդար եւ նպատակայարմար լուծումը, Ջաւախքի հայութիւնը մասնաւորապէս եւ ամբողջ հայութիւնը ընդհանրապէս՝ պիտի պահանջեն — ումնից որ պէտք է — իրականացումը դէթ նուազագոյն պահանջի՝ ԶԱՒԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ:

Եթէ մի Արխաղիա, Աճարիա, անգամ Օսէթիա կարող են ինքնավար հանրապետութիւններ կամ շրջաններ ճանաչուիլ Վրաստան:

նում — ի հարկէ Սորհրդային կարգերում եւ Սորհրդային իմաստով — ինչո՞ւ նոյն բանը պիտի զլացուի Ջաւախքին, որ իր տարածութեամբ եւ բնակիչներէ թուով յիշեալ մի երկուսից շատ էլ յետ չէ մնում, Օսէթիայից էլ աւելի բնակիչներ ունի:

Եւ սակայն այս խնդրում եւս վրացի բողջեւիկները քայլ առ քայլ գնում են իրենց նախորդ մենչեւիկների հետքով. մենչեւիկների, որոնք իրենց անկման օրն իսկ ստորագրած վրացական սահմանադրութեան մէջ՝ պլացան Ջաւախքին պարզ ինքնավարութիւն տալ: Երկու դէպքում էլ՝ միեւնոյն հիմնական պատճառով. որովհետեւ՝ Աճարիայի թիկունքին Տաճկաստանն էր եւ է կանգնած, Օսէթիայի եւ Արխաղիայի թիկունքին էլ Մոսկուան. եւ սակայն Ջաւախքի ինքնավարութեան մասին խօսք իսկ լսել չեն ուզում, որովհետեւ .. Ջաւախեցի հայի մէջքին «սարի նման կանգնած» այնպիսի «պահապաններ» եւ «պաշտպաններ» կան, ինչպիսիքն են, իրենց լաւ սերտած պատասխանը բերնին — «Վե՛ր կացէք եւ գնացէք ձեր տները. կոմունիստ կուսակցութիւնը դիտէ՛. թէ ո՛ւմ եւ ե՞րբ պէտք է տալ ինքնավարութիւն»:

Վա՛յ խեղճերին:
Իայց չէ՞ որ խեղճերն էլ մի օր շտկել կարող են իրենց մէջքը...

(Շարունակելի)

Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն Գ Ր Ա Տ Ո Ւ Ն

Պէրպլերեան Գրատունը հաստատած են 1905-ին. ունին ամէն տեսակ գրքերու ֆոյս մքերք: Ընդարձակ Գրացուցակն արի կը ղրկենք:

H. G. BERBERIAN
837 Washington St., Boston, Mass.